

Երեսմյակ

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկերատ Կաթալեյին



Հունիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոսկերատ Կաթալեյին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Մոսկերատ Կաթալեյին այցը համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ նշելով, որ նրա ներկայությունը մեծ խանդավառություն ու ոգեւորություն է առաջացրել հայ ժողովրդի զավակների մոտ, ովքեր առանձնակի սեր ունեն երաժշտության հանդեպ:

Խոսելով Հայաստան կատարած այցելությունից ստացած իր տպավորությունների մասին՝ Մոսկերատ Կաթալեյին իր հերթին նշեց, որ այս այցելությունն իր համար ուխտագնացություն է՝ Հայաստանն անվանելով քրիստոնեական հավատի բաց սիրտ:

երգչուհուն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, ում ուղեկցությամբ տիկին Կաթալեյն այցելեց Նաե



Միջոցառում՝ նվիրված Ավստրիայում Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների մասին օրենքի ընդունման 10-ամյակին

Ավստրիայում Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների մասին օրենքի ընդունման 10-ամյակի տոնակատարությունների շրջանակում մայիսի 27-ին Վիեննայի Արքեպիսկոպոսական պալատում, հյուրընկալությամբ Կաթոլիկ Եկեղեցու Ավստրիայի Կարդինալ Քրիստոֆ Շոնբորնի, տեղի ունեցավ տոնական հանդիսություն, որի նախաձեռնողներն էին Ավստրիայի կրթության, գիտության եւ մշակույթի նախարարության՝ Կրոնի վարչությունը, «Pro Oriente» կազմակերպությունը, Ավստրիայի Հայ Առաքելական, Ասորի Ուղղափառ եւ Ղաթի Ուղղափառ Եկեղեցիները:

Միջոցառմանը ներկա էր հովվապետական այցով Ավստրիայում գտնվող Ղաթի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Թավադրոս Բ-ն, ում շնորհվեց «Pro Oriente» կազմակերպության պատվավոր հովանավորի կոչում:

Տոնական հանդիսությանը ներկա էին Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատար Տիրան

արք. Պետրոսյանը, Ավստրիայի հոգեւոր հովիվ Անդրեաս քին. Իսախանյանը, Ավստրիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը, Ավստրիայի հայ համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ տարբեր Եկեղեցիների բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական եւ քաղաքական այրեր:

Հանդիսության ընթացքում խոսքով հանդես եկավ Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատար Տիրան արք. Պետրոսյանը, ով կարեւորեց դեռեւս Ավստրիո-Հունգարական կայսրության, ապա Ավստրիայի Հանրապետության կողմից Հայ Առաքելական Եկեղեցուն ցուցաբերված մասնահատուկ ուշադրությունը, Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնապետ ճանաչումը եւ այդ մասին օրենքի ընդունումը:

Հանդիսությունն ավարտվեց Ավստրիայի «Բիլան» քառյակի կոմիտասյան կատարումներով:

Սուրբ Էջմիածնի տոնը Մայր Աթոռում



Հունիսի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանդիսավորությամբ նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը: Տոնի առիթով Միածնաեջ Մայր տաճարում մատուցվեց սբ Պատարագ: Պատարագիչն էր Գեղարքունիքի թեմի առաջնորդ Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Պատարագիչ սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով տոնի կարեւորությանն ազգային-եկեղեցական կյանքում, մասնավորապես ասաց. «Անշուշտ Սբ Էջմիածինը դարերի ալեկոծություններ տեսավ, հայրապետական աթոռն աստանդական եղավ, սակայն երբեք Սբ Էջմիածնի հավերժական տե-

սիլն իր պատմական վայրից չխախտվեց, տեսիլքը մնաց այստեղ ու վերահաստատեց իր պատմական հանգամանքը»: Սրբազանը հավատացյալ հայորդիներին պատգամեց չխախտել իրենց հավատարմության ուխտը եւ հաստատուն պահել նվիրումը Սբ Էջմիածնի հանդեպ:

Պատարագի ավարտին Իջման սբ Սեդանի առջեւ, հանդիսապետությամբ Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ եւ հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության եւ անսասանության համար:



Հունիսի 4-ին տեղի ունեցավ Երուսաղեմի Նորընտիր Պատրիարքի գահակալության արարողությունը

Հունիսի 4-ին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում տեղի ունեցավ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի գահակալության արարողությունը:

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ գահակալության արարողությանը մասնակցեցին Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ ու հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Հովհաննիսյանը:

«Լավագույն տնօրեն» եւ «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթի հաղթողների մրցանակաբաշխություն եւ մանուկների օրհնություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Հունիսի 1-ին, Երեւանի պաշտպանության միջազգային օրվա առիթով, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հյուրընկալվեցին Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի (ԵԴԿ) եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից համագործակցաբար կազմակերպված նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) «Լավագույն տնօրեն» եւ «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթի հաղթողները եւ նրանց շուրջ 600 սաները: Մայիսի 25-ին անցկացված մրցույթին մասնակցել էին նախապես հայտ ներկայացրած 44 տնօրեն եւ 76 դաստիարակ: Մրցույթի գրավոր եւ բանավոր փուլերի արդյունքում որոշվել են լավագույն տնօրեններն ու դաստիարակները՝ յուրաքանչյուր մարզից եւ Երեւանից, ընդհանուր՝ 11 տնօրեն եւ 11 դաստիարակ:

Այս կապակցությամբ, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրապետյան Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ներկայությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի, Մայր տաճարում տեղի ունեցավ մանուկների եւ մրցույթի հաղթողների օրհնության արարողությունը, որի ավարտին Վեհափառ Հայրապետն իր պատգամը բերեց արարողության մասնակիցներին:

«... Սուրբ Ավետարանից տեղեկանում ենք, թե ինչպես մեր

Տեր Հիսուսը սիրում եւ ջերմությամբ էր վերաբերվում բոլոր մանուկներին, օրհնում նրանց եւ թույլ տալիս, որ իր մոտ գան՝ նրանց անարատ եղբայր մեջ տեսնելով երկնքի արքայության բարիքները կրելու արժանիքը: Մարդկային ազգի փրկության համար Քրիստոսը կարեւորեց մանկանալու եւ մանկան պարզասրտության ու մաքրության բարի հատկությունները: Այս մտադրությամբ է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, կարեւորելով մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում հատկապես նախադպրոցական ուսումնական հաստատության միջավայրում զարգացող եւ հասակ առնող երեխաների կյանքում աստվածայինության եւ հայրենասիրության հաստատուն գիտելիքների սերմանման առաքելությունը, այս տարի առաջին անգամ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համագործակցաբար կազմակերպեց իրականացրեց «Լավագույն տնօրեն» եւ «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթը»,- նշեց Հայոց Հայրապետը:

Իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց, որ հարկ է մանուկներին վաղ հասակից կրթել եւ դաստիարակել բարոյական սկզբունքներով, հոգեշահ խրատներով եւ առաքինագործ կենցաղավարությամբ բարի օրինակ լինել նրանց՝ հավելելով, որ «երբ մա-

նուկների մտավոր կրթությունն ընթանում է բարոյական եւ հոգեւոր դաստիարակության հետ, ապա իմաստանում են նրանց մանկական ըմբռնումները, եւ նրանց մատաղ սրտերը ձգտում են առաքինության մաքրության»:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀՀ ԿԳՆ նախարարին՝ համագործակցության եւ Եկեղեցուն ցուցաբերած իր ազնիվ աջակցության համար: Նորին Սրբությունը նաեւ իր գնա-

վագույնը ճանաչված տնօրեններին եւ դաստիարակներին:

«Լավագույն տնօրեն» անվանակարգում մրցանակների արժանացան Սվետլանա Մանջոյանը (Արարատ, Վեդուրի թիվ 2 մանկապարտեզ), Նուրե Առաքելյանը (Երեւան, Մալաթիա-Սեբաստիայի թիվ 90 մանկապարտեզ), Լիանա Խեչումյանը (Արագածոտն, Աշտարակի Արաքս Մուրադյանի անվ. մանկապարտեզ), Կարինե Գրիգորյանը (Արմավիր, Էջմիած-



հատանքը բերեց մրցույթի կազմակերպիչներին, բոլոր մրցանակակիրներին եւ նախաձեռնության բարերար տիար Տիգրան Հովհաննիսյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված շնորհազարդի մանուկներին եւ հանապազօրինությամբ պայծառ երկինք եւ իմաստություն ու արիություն պարգեւի նրանց՝ անսայթաք ընթանալու Տիրոջ ճշմարտության ճամփաներով, որպեսզի դառնան արժանավոր հետնորդները մեր փառապանծ հայրերի եւ իրենց կյանքով ու գործով պայծառություն բերեն մեր ժողովրդի եւ հայրենիքի կյանքում՝ միշտ մնալով հավատարիմ զավակներն առաքելափառ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:


Օրհնության արարողության ավարտին Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ ԿԳՆ նախարարի կողմից պատվոգրեր, գրքեր եւ դրամական պարգեւներ շնորհվեցին լա-



նի թիվ 15 մանկապարտեզ), Գայանե Մաքսիմյանը (Կոտայք, Ե. Հրազդանի թիվ 5 մանկապարտեզ), Լուսինե Հայրապետյանը (Շիրակ, Մարալիկի համայնքային նախադպրոցական հիմնարկ), Բելլա Կոստանյանը (Սյունիք, Ե. Կապանի թիվ 6 մանկա-

տեզ), Էմմա Բադալյանը (Վայոց ձոր, Ե. Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ), Գայանե Թամրազյանը (Տավուշ, Գ. Հաղարծնի մանկապարտեզ):

**Լրատվական կյուբերը՝
ՍՍՀՐ ԱՅՈՒՆ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԻ**



Սկիզբը՝ թիվ 8-10

Այժմ վերադառնալով Փիթեր Նաջարյանին եւ նրա «Ուղեւորություններ» երկին: Ուշագրավ է, թե ինչպես է ամերիկահայ գրողը գնահատում հայոց ցեղասպանությունը եւ ինչպես է վերաբերվում թուրք ոճրագործներին: Դատելով Նաջարյանի «Ուղեւորություններ» վեպից՝ նա լի է չարությամբ եւ ատելությամբ թուրք եղեռնագործների հանդեպ: Ասենք ավելին՝

Հայկական թեմաների ճարճավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

սփյուռքահայ գրականության մեջ դժվար է գտնել մեկ այլ գրողի, որն այդքան չարացած լինի թուրքերի դեմ եւ այդքան անսթող կերպով ցուցաբերի իր ատելությունը: Բայց այստեղ որեւէ զարմանալի բան չկա. առնվազն տարօրինակ կլինեք, եթե ամերիկահայ գրողը հանդուրժողական եւ ներողամիտ լինեք մի ժողովրդի հանդեպ, որը հիրավի ոճիր էր կատարել հայ ազգի նկատմամբ: Չարմանալի է, բայց փաստ, որ սփյուռքահայ ուրոշ գրողներ առավել ներողամիտ են թուրքերի նկատմամբ կամ ավելի զուսպ են արտահայտում իրենց զգացմունքները: Որպես օրինակ կարելի է բերել Լեւոն-Չավեն Սյուրմեյանին եւ Վիլյամ Սարոյանին: Իհարկե, միանգամայն գովելի է, որ հայ մտավորականը պահպանում է իր հավատարմությունը քրիստոնեության սկզբունքներին, սակայն իրական կյանքը շատ հաճախ վկայում է, որ ներել չարա-

գործին եւ նրան անպատիժ թողնել նշանակում է կամա թե ակամա խրախուսել չարին ու անբարոյականությանը: Փիթեր Նաջարյանն ակնհայտորեն այն գրողներից է, ով առավել քան լավ է հասկանում այդ ճշմարտությունը: Իսկ անհուն ներողամտության քրիստոնեական սկզբունքն ակներեաբար կիրառելի չէ այն մարդկանց եւ ազգերի նկատմամբ, ովքեր ունակ չեն զղջալու իրենց արարքների համար: Թերեւս սխալված չենք լինի, եթե ասենք, որ թուրք ազգը կամ առնվազն դրա գերակշռող մասը հենց այդ շարքին են դասվում: Ասվածն առավել հիմնավոր դարձնելու համար նշենք, որ ոչ հեռավոր անցյալում թուրքերը բռնաճնշումների եւ հալածանքների էին ենթարկում Թուրքիայում բնակվող քրդերին, եւ եթե չլինեք համաշխարհային հանրության ուշադրությունը, միգուցե քրդերն արժանանային հայերի ճակա-

տագրին: Էլ չենք խոսում վերջին շրջանում Թուրքիայում հերթական անգամ բոցավառված հակահայկական տրամադրությունների մասին, որոնք պարբերաբար դրսևորվում են հայերի հանդեպ՝ ֆիզիկական բռնությունների ձեւով: Փիթեր Նաջարյանի հաջորդ ուշագրավ երկը «Հիշողության դուստրերը» վեպն է (1986 թ.), որում գրողը զարգացնում է նախորդ երկում արծարծված թեմաները: Մինչեւ «Հիշողության դուստրերը» վեպին անդրադառնալը՝ հակիրճ ներկայացնենք, թե ինչպես են գրաքննադատները գնահատել այն: Ռոբերտ Փինսկին հետեւյալ կերպ է բնութագրել ամերիկահայ գրողի գիրքը. «Նաջարյանի երկը լի է կենսական ուժով եւ խիզախությամբ: Նրա դիտարկումները ճշգրիտ են, համարձակ ու խորաթափանց: Նրա մտքերի մեջ մեծ ինքնավստահություն կա» (տե՛ս P. Najarian,

an, Daughters of Memory, New York, City Miners & Books, 1986, ներածական մաս): Ամերիկացի քննադատներից Ռոբերտ Հանսն այս կերպ է գնահատում սփյուռքահայ գրողի երկը. «Սա մի համարձակ գիրք է, որն իր ոգով նման է Ուիլսոնի «Անվերջ օրորվող օրորոցից դուրս» կամ Գինգերգի «Կադիշ» պոեմներին: Նաջարյանի վեպը ողբերգական գիրք է, որը գրված է քնարական գեղումներ ունեցող շարքի տեսքով: ... «Հիշողության դուստրերը» թերեւս նրա լավագույն գիրքն է» (տե՛ս P. Najarian, նույն տեղում): Սփյուռքահայ գրողի երկը բարձր է գնահատել նաեւ Թութայն Վուլֆը. «Նաջարյանը ներդաշնակորեն միահյուսում է իրար պատմությունը, արվեստը եւ անձնական դիտարկումները, մինչեւ որ դրանց սահմանագծերը չքանան:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՆՈՆ Ա ԵՐԵՎԱՆՋԻ (1763-1780)


Սկիզբը՝ թիվ 7-10

Այս շրջանում Պարսից պետությունն իսկական քաոսի էր վերածվել, և տեղերում խաներն ինքնագլուխ էին դարձել: Դրանցից մեկը Զյուսեյն-Ալի խանն էր, որը հարկատու էր դարձել վրաց թագավորությանը, որպեսզի խուսափի վրաց թագավորի թշնամությունից: Անշուշտ նրա սրտով չէր, որ հայտնվել է քրիստոնյա թագավորության իշխանության ներքո և երբեմն-երբեմն դրանից ազատվելու փորձեր էր անում: Պահը հարմար դիտելով՝ նա 1764-ին հարձակվել էր Ղազարի գավառի վրա՝ մեծ վնասներ հասցնելով բնակիչներին: Վրաց Զեթակ թագավորը շարժվեց դեպի Էջմիածին, կանգ առավ Սամաղար գյուղի մոտ, այցելեց Էջմիածին ու հյուընկալվեց կաթողիկոսի կողմից: Զյուսեյն-Ալին նեղն ընկնելով դիմեց կաթողիկոսի միջնորդությանը: Զեթակը տեղի տվեց միջնորդին և հայտարարեց, թե երեւանցիները թող նվեր լինեն Էջմիածնին, ինչի համար կաթողիկոսը հանդիսավորապես իր շնորհակալությունը հայտնեց նրան: Միմենոն ստիպված եղավ խանին համոզել, որ ընդունի Զեթակի պայմանները, և վերջինս էլ հրաժարվի դրամական պահանջից: Այս ձեռով երկիրն ազատեց ավերվելուց, իսկ խանին՝ մեծ վտանգից: Միմենոն կաթողիկոսն իր միջնորդությամբ կարողացավ հաշտեցնել Զյուսեյն-Ալիի աներ Սուլեյման Քուրդ բեյին և Զեթակին: Զարկ է խոստովանել, որ Սուլեյմանն էլ օգտակար եղավ Միմենոնին, երբ Զյուսեյն-Ալի խանը Միմենոնին հարկի տակ դնելուց հետո վանքի տարեկանը կանխիկ էր պահանջում և այդ պատճառով այնպես էր խռովել Միմենոնից, որ նրան տեսնել չէր ուզում: Աները փեսային պախարակեց, և

Զյուսեյն-Ալին, հիշելով Միմենոնի երախտիքը, մեծացրեց իր հովանավորությունը նրա նկատմամբ: Ըստ որում, դրանից ինքն ավելի օգտվեց. 1769-ին Զեթակի և Զյուսեյն-Ալիի հարաբերությունները դարձյալ լարվեցին, և վերջինս կրկին օգտվեց Միմենոնի միջնորդությունից, և մինչև 1779 թիվը խաղաղություն տիրեց: 1779 թվին Զեթակն ստիպված եղավ Զյուսեյն-Ալիին զենքով ընկճել: Միմենոնի քաղաքական կշիռը խիստ մեծացավ, և այլեայլ կողմերից դիմում էին նրա միջնորդությանը, եթե հայտնվում էին ծանր կացության մեջ: Իմերեթի Սողոմոն թագավորը, որ բաշախյաց կամ բացգլուխների թագավոր էլ էր կոչվում՝ իմերեթցիների գլխանոց չօգտագործելու պատճառով, հրաման արձակեց, որ իր հպատակներն այլևս իրենց տղաներին ու աղջիկներին օսմանցիներին չվաճառեն՝ հին սովորության համաձայն: Դրանից զրգռվելով՝ Երզրումի Աբդուռահման փաշան պատերազմ սկսեց Սողոմոնի դեմ: Իմերեթցիները, քիչ-քիչ նեղելով օսմանցիներին, թույլ տվեցին, որ նրանք երկրի խորքերը մտնեն և անգամ Ռիոնի կամուրջն անցնեն, որից հետո կամուրջը քանդեցին ու օսմանցիներին կոտորեցին, իսկ հրամանատարը մի կերպ փրկվեց: Օսմանցիներից անհայտ կորավ Բալազտի փաշայի որդին, եղբորորդին և կուսակալը: Օսմանցիները դիմեցին Միմենոն Երեւանցու միջնորդությանը՝ կորածներին գտնելու և ազատելու համար: Միմենոնը Զեթակ և Սողոմոն թագավորների մոտ ունեցած հեղինակության շնորհիվ կարողացավ օսմանցիների խնդրանքը կատարել: Օսմանների և Միմենոնի միջև սուրհանդակություն անողը Բագրեւանդի առաջնորդ Չաքարիան էր, որն ավելի ու-

ժեղացավ իր դիրքում և Միմենոնի՝ 1764 թվի մարտի 29-ի պաշտոնագրով վերադարձավ իր պաշտոնին:

Միմենոն իրոք մեծ գործ կատարեց Մայր Աթոռի իրավունքների պաշտպանության խնդրում: Ներսես Գանձակեցին, որ երկար հովվապետեց Գանձասարի կամ Աղվանից կաթողիկոսությունում, և այն էլ՝ ավելոծ ձեռով, 1763 թվին մահացավ, երբ դեռ կենդանի էր Շամախեցի կաթողիկոսը: Նրա մահից հետո նրա եղբորորդի Իսրայելը, որ երիտասարդ հասակում եպիսկոպոս էր ձեռնադրվել, կաթողիկոս օծվեց: Եվ դա կատարվեց առանց Միմենոնի ու Գանձասարի վիճակի համաձայնության՝ Շահվերդի խանի կամքով: Իսրայելն օծումից հետո դիմեց Շամախեցուն՝ խնդրելով նրա հաստատումը, որը դրան պատասխանեց մեղադրական ու հանդիմանական նամակով: Շամախեցին այդ օրերին մահացավ, և Իսրայելն իր համախոհներով դիմեց Միմենոն Երեւանցուն՝ խնդրելով նրա հաստատումը, իսկ նա էլ պահանջեց, որ Իսրայելն անձամբ ներկայանա: Իսրայելը չգնաց, իսկ նրա ընդդիմադիրները 50 հոգուց բաղկացած պատգամավորություն ուղարկեցին և որոշ խաների հավանությամբ Էջմիածին բերեցին ում Զովհաննես վարդապետի՝ կաթողիկոս օծելու համար: Սակայն Միմենոն սրան էլ չհավանեց՝ դիմադրելով աղերսանքներին ու սպառնալիքներին: Պատգամավորները վերադարձան Գանձասար ու Զովհաննեսին օծեցին կաթողիկոս: Կառնակ վիճակ ստեղծվեց մինչև 1765 թվականը, երբ Միմենոն կարողացավ համոզել Զովհաննեսին հեռանալ կաթողիկոսությունից, եթե Իսրայելը հնազանդվի և Էջմիածին ներկայանա: Սակայն Իսրայելը կրկին ընդդիմացավ՝ ապավինելով Շահվերդի խանի պաշտպանությանը՝ արհամարհելով Զեթակ թագավորի հորդորները և Տփղիսի առաջնորդ Չաքարիայի ուղարկած պատվիրակությանը: Բանը հասավ այնտեղ, որ Միմենոն եպիսկոպոսական ժողովով նրան արժոնից զրկեց: Վավերացրեց Զովհաննեսի կաթողիկոսությունը, և նա պատշաճ պատվով, կոնդակներով ու հրահանգներով ուղարկ-



վեց Գանձասար: Նրան ուղեկցեց Տփղիսի առաջնորդ Չաքարիան՝ որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ: Դա կատարվեց 1765 թվի դեկտեմբերի 25-ին, իսկ Էջմիածին մեկնեցին դեկտեմբերի 28-ին: Իսրայելը փորձեց Զեթակի պաշտպանությանը դիմել, սակայն չընդունվեց և ձեռնունայն վերադարձավ Գանձակ, ուր 11 տարի բաՆադրված մնաց:

Էջմիածնին ուղղակի հպատակվում էր տերունի կոչված վիճակներից Աստրախանը, որ ներկայացնում էր Ռուսական կայսրության բոլոր հայերին: Զայտի չէ, թե երբ է կազմավորվել վիճակը, բայց անկասկած է, որ այն հասնում է մինչև Միսաս Տիգրանյան եպիսկոպոսը, որ ընկերացել էր Իսրայել Օրուն և Ռուսաստանում էլ վախճանվեց: Թերեւս, նա էլ հաստատել է Ռուսաստանի հայերի առաջնորդությունը, չնայած Միսասի հաջորդների անունները չեն պահպանվել: Ղազար Ջահկեցու օրոք այդ պաշտոնում էր Բարսեղ Փառակեցի եպիսկոպոսը, որի զգվելի գործերը նրա դեմ դուրս բերեցին վիճակի անդամներին, իսկ երբ Ղազար Ջահկեցին ականջ չդրեց նրանց բողոքներին, նրանք հեռացրին Փառակեցուն և Գանձասարի աթոռից Ստեփանոս Անանյան եպիսկոպոսին իրենց առաջնորդ ընտրեցին:

Շարունակությունը՝ էջ 4

ԱԹԹԱՆԱՀԻ

ՎԵՋԻՐ ՀԱՄԻՂ ԻՐԵՆ ԱԼ-ԱՔԲԱՍԻ ՄԱՍԻՆ

Աբու-ալ-Աքբաս Զիբաս Ալլահի իբն ալ-Մունաշիմն ինձ պատմեց մի պատմություն, որ լսել էր իր պապից:

«Մի անգամ ինչ-որ մի կին, ճանապարհին կանգնեցնելով Զամիդ իբն ալ-Աքբասին, դժգոհեց իր աղքատությունից, օգնություն խնդրեց և խնդրագիր տվեց, որ բերել էր իր հետ: Ալ-Մունաշիմը նստեց և թուղթը մակագրեց, որով նրան պիտի տային երկու հարյուր դինար: Գանձապահը չէր ուզում այդպիսի գումար վճարել ռամիկ մեկին և այդ մասին հարցրեց Զամիդին, որ պատասխանեց, թե մտածել է երկու հարյուր դիրհեմի մասին: Բայց քանի որ ալլահի կամոք ինքը գրել է դինար, ապա իր խոսքից չի հրաժարվում: Եվ վեզիրը զանձապահին ստիպեց վճարել այն կնոջը:

Մի քանի օր անց մեկը Զամիդ իբն ալ-Աքբասին հանձնեց խնդրագիր, որով ասում էր, թե ինքն ու իր կինը առաջ աղքատ էին, հետո կինը դիմեց վեզիրին, և նա տվեց երկու հարյուր դինար, որից հետո կինն իր վրա զարմացած է և այժմ ձգտում է ամուսնուն ստիպել բաժանվել իրենից: Նա վեզիրից խնդրում էր որեւէ մեկին հանձնարարել, որ սանձահարի իր կնոջը:

Զամիդը ծիծաղեց ու կարգադրեց այդ մարդուն տալ երկու հարյուր դինար՝ ասելով. «Նրան տվեք այդ դրամը և ասացեք, որ

այժմ ինքը հավասարվեց իր կնոջը, և նա այլևս բաժանում չի պահանջի»: Մարդը դրամն առավ և տուն գնաց որպես մեծահարուստ:

ԱՆԳՐԾՈՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՑ

Ղադի Աբու Բաքր Ամադ իբն Սայյարը պատմեց ինձ.

«Օմանում մի շեյխ, Թիգի ու Մուկրանի բնակիչներից, որին բոլորը գովում էին իբրեւ միանգամայն վստահելի մարդու և ծովային գործի լավագիտակի, ինձ ասաց ինչի կատմածից, որի հետ ինքը գրուցել էր Զնդկաստանում, թե ինչպես մի անգամ իրենց թագավորներից մեկի դեմ խռովություն է ծագել, որի ղեկավարը հմուտ կառավարող էր: Զամբերատարությամբ ու համառությամբ աչքի ընկնող այդ թագավորը գործ ուղարկեց խռովարարի դեմ, բայց սա՛ հաղթեց: Այնժամ թագավորն ինքը գնաց արշավի, թեպետ խորհրդականներն աշխատում էին համոզել՝ պնդելով, որ նա անձամբ չպիտի գնա խռովարարների մոտ, այլ պետք է մաշել, սպառել նրանց ուժերը՝ մեկը մյուսի ետեւից գործ ուղարկելով, որովհետեւ նրանք պատրաստ չէին երկար ժամանակ դիմադրելու թագավորի գործերին: Բայց նա չլսեց նրանց և գնաց ռազմավարի, ուր մարտի ժամանակ սպանվեց, և խռովարարը գրավեց նրա պալատը, թագավորությունը և սկսեց հմ-

տորեն կառավարել՝ իսկական թագավորի նման:

Որոշ ժամանակ անց, հիմնավորվելով գաղի վրա և համընդհանուր հարգանք ձեռք բերելով, այդ նոր թագավորը որոշեց երկրի բոլոր կողմերից կանչել իմաստուններին: Ուստի նա գրեց նահանգների պետերին՝ հորդորելով բոլոր նահանգների բնակիչներին՝ ընտրել հարյուրական ամենախիմաստուն և խոհեմ մարդկանց և ուղարկել իր մոտ: Երբ այդ ընտրյալները մոտեցան պալատի դարպասներին, թագավորը թելադրեց նրանցից ընտրել տասը հոգու և այդ տասին բերել իր մոտ, նաեւ տասը հոգի ընտրեցին պալատականներից:

Թագավորը նրանց դիմեց այսպես. «Իմաստուն մարդն իր մեջ պիտի պարզի թերությունները, որպեսզի դրանցից ազատվի: Դուք տեսնո՞ւմ եք արդյոք իմ մեջ որեւէ թերություն կամ պակասություն՝ իմ կառավարման մեջ»: Նրանք պատասխանեցին. «Միայն՝ մեկ, և թե՛ մեզ խոստանում ես անվտանգություն, մենք քեզ կհայտնենք»:


Թագավորը խոստացավ նրանց անվտանգություն, և նրանք ասացին. «Մենք տեսնում ենք, որ քո մեջ ամեն ինչ նոր է»: Ուզում էին ասել՝ թագավորական արյուն չունի: Նա հարցրեց. «Իսկ ինչպես էր նախորդ թագավորի այդ պարագան»: «Նա թագավորի որդի էր», - պատասխանեցին նրանք: «Իսկ նրա հա՞յրը»: Նրանք նույն պատասխանը կրկնեցին:



Այդպես նա կրկնում էր հարցը՝ հիշելով առնվազն տասը թագավորի, և ամեն անգամ ստանում էր նույն պատասխանը, մինչև որ հասավ վերջինին, որի մասին իմաստուններն ասացին, թե նա նվաճող էր: «Այդ դեպքում, - ասաց նա, - այնպիսին եմ, ինչպես թագավորների շարքում այդ վերջինը, և եթե իմ օրերը տեւական լինեն, և իմ կառավարումը՝ հաջող, թագավորությունը կմնա իմ որդիներին, և նրանց սերունդները կունենան նույնպիսի արքայական արյուն, ինչպես իմ նախորդները»:

Դրանից հետո իմաստունները երեսնիվայր ընկան թագավորի առջեւ՝ ի նշան համաձայնության:

Շարունակությունը՝ էջ 5



ԱՐՁԱԿ

1960-1980-ական թթ. հայ արձակը ներկայացնում է բավականին հարուստ մի պատկեր: Վերջին տասնամյակներին անհամեմատ լայնացել են հայ արձակի հետաքրքրության շրջանակները՝ ի հայտ բերելով իրականության գեղարվեստական վերարտադրման ուշագրավ յուրահատկություններ: Աճել է նաեւ արձակագիրների քանակային կազմը, որը, իհարկե, թեւեւ բնավ էլ որակական խտացում չի ենթադրում, բայց հատկանշական է գեղարվեստական նյութի վերարտադրման բազմազանության տեսակետից:

Ժամանակակից հայ արձակի հիմնական ուժն այն սերունդն է, որն ասպարեզ իջավ 1960-ական թթ. եւ հատկանշվում է Հրանտ Մաթեոսյանի, Մուշեղ Գալշոյանի, Աղասի Այվազյանի, Վարդգես Պետրոսյանի, Չորայր Խալափյանի, Հովհաննես Մելքոնյանի, Ռուբեն Հովսեփյանի, Պերճ Չեթունցյանի, Մանուկ Մնացականյանի եւ էլի մի քանիսի անուններով: Այս հեղինակների հետ մեկտեղ իրենց ճանապարհն են շարունակել Վախթանգ Անանյանը, Սերո Խանգադյանը, Ստեփան Ալա-

շաշյանը, Հովհաննես Ղուկասյանը, Աբիգ Ավագյանը, Վալտեր Արամյանը, Ռաֆայել Արամյանը, Շահեն Թաթևկյանը, Բաղիշ Հովսեփյանը, Գեղամ Սեւանը եւ ուրիշներ:

Ավելացնենք նաեւ, որ 1970-1980-ական թթ. հայ արձակն ստացավ նոր համալրում՝ Վահագն Գրիգորյան, Լեւոն Խեչոյան, Վանո Սիրադեղյան, Մերուժան Տեր-Գուլասյան, Վարդան Գրիգորյան, Ռաֆայել Նահապետյան եւ ուրիշներ:

1960-1980-ական թթ. հայ արձակն իր հարցադրումներով, նյութով, որակական մակարդակով, ժանրային ընդգրկումով բավականին բազմազան է եւ այնքան էլ հեշտ չի «ենթարկվում» տեսական խմբավորման: Դա այդպես է, որովհետեւ, ինչպես պոեզիայում, այնպես էլ արձակում, գլխավոր նպատակ դարձավ ժամանակակից մարդու հոգեւոր ներաշխարհի տարողունակ ու խոր պատկերման խնդիրը: Ժամանակակից մարդը դիտվեց կյանքի գրեթե բոլոր օղակներում՝ ներառելով ե՛ւ գյուղը, ե՛ւ քաղաքը, ե՛ւ մտավոր, ե՛ւ արտադրական ոլորտը, ե՛ւ բնաշխարհը, ե՛ւ ներաշխարհը... Միաժամանակ արձակն իր հետաքրքրությունները խորացրեց ժողովրդի մոտիկ եւ հե-

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ռու պատմության մեջ: Տարատեսակ ու բազմաշերտ նյութի յուրացումն էլ բովանդակային հարստության նախադրյալ հանդիսացավ: Դա էլ հնարավորություն է տալիս հայ արձակը խմբավորելու եւ քննելու այնպիսի հարցադրումների արժարժույթով, ինչպիսիք են ժամանակակից կյանքը ու ժամանակի հերոսը, ժողովրդի կյանքն ու պատմությունը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՅԱՆՔ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՐՈՍ հարցադրումը, ըստ էության, միասնական է ու միաձուլվող՝ նկատի ունենալով իրական կյանքի մեկը մյուսով փոխկապակցված բոլոր բնագավառները: Այդ միասնության մեջ էլ անհրաժեշտ է դիտել առանձին հեղինակների ստեղծագործությունը՝ նկատի ունենալով նաեւ այն տարբերությունը, որ կա ժամանակակից կյանքի ըմբռնման ու պատկերման հարցում: Դա կնպաստի հեղինակների ստեղծագործության գեղարվեստական միասնությունն անհարկ չմասնատելու, նրանց ներքին ամբողջականությունը պահպանելու գործին:

Ժամանակակից կյանքի գեղարվեստական պատկերման հիմնական խնդիրները ճշտելու վերաբերյալ 1960-ական թթ. հայ արձակագիրների մեջ ծավալվեց մի սուր բանավեճ: Խոսքը հիմնականում վերաբերում էր այն հարցին, թե գրողի ուշադրության կենտրոնում պիտի քաղաքը լինի, թե՛ գյուղը: Մասնավոր հոդվածներով հանդես եկան Վ. Պետրոսյանը, Հ. Մաթեոսյանը, Պ. Չեթունցյանը, Գ. Արշակյանը եւ ուրիշներ: Մեծ մասը ժամանակի համար բնու-

թագրական էր համարում քաղաքային կյանքի պատկերումը: Այն տպավորությունն էր ստացվում, թե կարծես գյուղական կյանքի նյութով գրականություն ստեղծելու միակ ներկայացուցիչը Հ. Մաթեոսյանն է: Ընդ որում, թեւեւ բացահայտ չէր ասվում, բայց խոսքի հիմնական շեշտադրումն այնպիսին էր, որ գյուղական կյանքին անդրադառնալը համարվում էր հետամնացություն կամ պահպանողականություն՝ կառչած հայ արձակի գյուղագրական թեւի ավանդույթներին, իսկ քաղաքագրությունը՝ առաջընթաց եւ նոր քայլ՝ այս անգամ մոռացության տալով այդ ուղղությամբ եւս հայ արձակի ձեւավորած բավականին հարուստ ավանդույթները: Գյուղական կյանքի նյութով ժամանակակից խնդիրներ արծարծելու հետամուտ Հ. Մաթեոսյանը հանդես եկավ «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածով, որի մեջ իր մտքերը ձեւակերպեց այսպես. «Չգացմունքներ է հարուցում շատ ավելի երեկվա օրը, քանի որ հիշողության երեկվա հովիտը բնակեցված է ցանկալի կամ ատելի դեպքերով ու դժբերով, որոնք են մեր հիշողությունների ոսկի նստվածքը, հենց որն էլ կարող է դառնալ գրականություն: <...> Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին» (**Հ. Մաթեոսյան**, Այսպես կոչված գյուղագրության մասին, «Գրական թերթ», 1968, թիվ 37, 13 սեպտեմբեր):

Քաղաքային կյանքն ու կենցաղը պատկերելու հետամուտ արձակագիրներն իրենց հերթին պահանջում էին գրականու-

թյան մեջ տեղ տալ կյանքի նոր երեւոյթներին ու հերոսներին: Պահանջը, անշուշտ, իրավացի էր, բայց նորի իրավունքի հաստատումն ամենեւին էլ չպետք է լիներ կյանքի «նստվածք» տված շերտերի շրջանցման հաշվին:

Բանավեճը՝ բանավեճ, տեսության ճիշտն ու սխալն էլ իր հերթին, բայց եւ գրողի ու գրականության պատմության համար կարեւորը գեղարվեստի փաստն է: Եվ ահա այդ ընթացքում է, որ գեղարվեստորեն մարմնավորվեցին տեսական ըմբռնումները՝ արդյունքում ի մի բերելով ժամանակակից կյանքի տարբեր ոլորտների տարողունակ պատկերը:

Անհատը՝ մարդկային մի պարզ երջանկության որոնման իր դժվարին ճակատագրով, սա կարծես այն ընդհանրացումն է, որը բնորոշ է ժամանակակից կյանքի ու ժամանակակից հերոսի գեղարվեստական պատկերմանը՝ ե՛ւ նրանց, որոնց հայացքն ուղղված է գյուղին, ե՛ւ նրանց, որոնք ուշադիր հետեւում են ժամանակակից քաղաքի գնալով բարդացող մարդկային հարաբերություններին (Մաթեոսյան, Պետրոսյան, Խալափյան):

Դժվարին մաքառումներով կյանքում իր տեղը գտնելու, իր հոգու ազատությունը չկորցնելու, իր երկրի տերը լինելու, իր տեսակը, իր տոհմը շարունակելու, իր մարդկային երջանկությունը վաճելու, իր տեղն այս մեծ աշխարհում ճշտելու առանցքային հարցերն են ընկած **Հ. Մաթեոսյանի** ստեղծագործության հիմքում:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՄԿՈՍՆԵՐ


ՄԻՄԵՆՈՆ Ա ԵՐԵՎԱՆՃԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Ելիգավետա կայսրուհու օրոք ստացան պետական հաստատում: Չմոռանալ, որ Միմաս Տիգրանյանն էլ էր Գանձասարի աթոռից: Սակայն այս դեպքում Ռուսաստանի հայերը պաշտոնապես անջատված կացություն ձեռք բերեցին: Դա եղավ 1749 թվին: Ջահկեցու հաջորդները դրան առանձին կարեւորություն չտվեցին, եւ այն մնաց Գանձասարի կաթողիկոսության ենթակայության ներքո: Այնպես որ Էջմիածնից վարդապետ կամ եպիսկոպոս չէր կարող գալ Ռուսաստանի կողմերը: Միմենը կարգավորեց այդ գործը եւս: Նա նվիրակության պաշտոնով Ռուսաստան ուղարկեց Հովհաննես Զանաքեռցի վարդապետին, սակայն գանձասարցիների ուժը կատարյալ էր, իսկ ժողովուրդը մի տեսակ պաղել էր Էջմիածնից: Եվ Աղվանից կոչված երկու կաթողիկոսներն էլ՝ Հովհաննեսը եւ Իսրայելը, չէին կամենում այդ վիճակը ձեռքից բաց թողնել: Զանաքեռցին ընդունելություն չգտավ եւ նվիրակություն բացել չկարողացավ: Սկզբում Միմենը ճնշեց Իսրայելի ընդվզումը, խաղաղեցրեց Հովհաննես կաթողիկոսին եւ Ռուսաց կայսրությանը նամակ գրեց, որ վերականգնվեն Մայր Աթոռի իրավունքները

Ռուսիո հայերի վրա: Պետերբուրգ ուղարկվեց Դավիթ Տփղիսեցի վարդապետը, որը խիտ մոռուքով, գեղեցկադեմ մարդ էր: Միմենն ինքը գեղեցիկ չէր, բայց գեղեցկության դերը հասկանում էր:

Կաթողիկոսը 1766 թվի օգոստոսի 1-ին լավ պատճառաբանված նամակ գրեց կայսրուհուն եւ թագաժառանգ Պավելին, ընծաներ էլ ուղարկեց. սբ Կարապետի, սբ Հովսիսիմեի, սբ Գեորգի Նշխարներից մի մաս, ինչպես նաեւ՝ Նոյան տապանից մի մասուկը, որոնք նա գետեղեց արծաթյա արկղիկում: Բազմաթիվ հանձնարարականներ էլ գրեց Ռուսաստանի հայերին, որպեսզի կաթողիկոսական նվիրակին պատշաճորեն պատվեն եւ կառավարության մոտ նրա մուտքն ու հաջողությունն ապահովեն: Նամակներն ուղարկված էին Աստրախանի հայ մեծավորներին, որոնք սկսել էին հակվել դեպի Էջմիածինը, երբ Գանձասարի կամ Աղվանից աթոռը կորցրել էր իր ազդեցությունը: Կաթողիկոսի կողմից հանձնարարվեց Մովսես Աստապատցուն, որ թթնու սերմ է շերամի որդ տանի Ռուսաստան: Դա առաջին անգամ էր արվում եւ արժանացավ կայսերական բարձր գնահատականին, իսկ նրա խոսքն ընդունելի էր ռուսաց արքունիքում: Կաթո-



ղիկոսը նրան հատուկ կոնդակով խնդրեց սատարել իր ուղարկած պատգամավոր Դավիթ վարդապետին: Ավելորդ է ասել, որ Աստրախանի աթոռի կացությունը Մովսեսի սրտով էլ չէր: Ռուսական արքունիքում մեծ հարգանք էր վայելում Հայրություն կամ Հովհաննես քահանային, սակայն հայտնի չէ, թե ինչ պատճառով: Պետերբուրգում եւ Մոսկվայում առեւտրական գործերում ազդեցիկ դիրք ունեին Եղիազար, Ղուկաս, Ներսես եւ Հովհաննես աղաները, ինչպես նաեւ՝ առեւտրականներ Բարթողիմեոսը եւ Սարգիս Շամխեցին, որոնց Միմենը նույնպես հանձնարարականներ գրեց: Նամակ գրեց նաեւ Աստրախանի ռուս մետրոպոլիտ Մեֆոդին կամ

Մեթոդիոսին: Մի խոսքով՝ ամեն ինչ արվեց, որ Մայր Աթոռի իրավասությունից 17 տարի դուրս եկած Ռուսաստանի վիճակը նորից ենթարկվի Էջմիածնին: Միմենի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, եւ Եկատերինա Բ-ն ընդունեց նրա առաջարկը: Ռուսական կայսրության համար շատ ավելի կարեւոր էր սերտ կապերի հաստատումն Էջմիածնի՝ Մայր Աթոռի հետ, որն իրական ազդեցություն ուներ բոլոր հայերի վրա, քան թե՛ դրանից զուրկ Գանձասարի կամ Աղվանից աթոռի: Իր հերթին Եկատերինա կայսրուհին ընծաներ ուղարկեց Միմենին, իսկ 1768 թվի հուլիսի 30-ին հրովարտակ արձակեց, որում մեծ կարեւորություն էր տրվում Հայոց կաթողիկոսին: Հրովարտակը Ռուսաստանի հայերին հանձնարարում էր ճանաչել Միմենի հոգեւոր առաջնորդ լինելը եւ առանց Էջմիածնի գրավոր կարգադրության՝ հայ հոգեւորականներ չընդունել Ռուսաստանում:

Միաժամանակ կայսրուհին Ռուսաստանից դուրս գտնվող հայերին՝ Միմեն կաթողիկոսին ու նրա հաջորդներին, յուզբաշխներին ու կառավարիչներին, վերցնում էր իր հովանավորության ներքո: Փաստորեն, այդ ժամանակներից սերտ կապ հաստատվեց Հայոց կաթողիկոսության եւ Ռուսական կայսրության միջեւ, որն ի վերջո հանգեցրեց Հայաստանի մի հատվածի միացմանը Ռուսական կայսրությանը: Միմենը, ըստ էության, շարունակում էր Իսրայել Օրու եւ Միմասի սկսած գործը:

Շարունակելի

Բարկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

«Մանուկ-կսրիճ» ֆառական հերոսը բուհական հայրեններում



Սկիզբը՝ թիվ 10
Բանաստեղծ-գուսաններն իրենց երգերն ասել են շվայտ կերուխումների, գիւնարբուքների ժամանակ: Վերը նշված հայրենում երեւում է, որ հեղինակ-գուսանն ապրել է այդ՝ հեթանոսական ոգով ներծծված կյանքով, ուր իշխողը սերն ու գինին են եղել:

Հայրեններից մեկում ասվում է (*Սույն տեղում, էջ 131*).

Հանչաք ես հայրեն ասի՝

Որ զՔաջերն ի քան ուսուցի...

Ալիշանն այս առիթով գրում է. «Այդ մեր շատերգ գուսանէն առաջ այլ Քաջ գիտէին երգել, ինչպէս վկայէ Զեթում թագաւոր կամ իր բերնէ հարցնող եւ պատասխանող Վահրամ Վ. Դիւաց կարգէն գրելով զանոնք. «ընդէ՛ր ոմանք ի նոցանէ երգս եւ եղանակս երգեն, որք ի բազումք զձայնն լուեալ են, եւ Քաջք զպատերազմունս մղեն, եւ զորս երեոց որսան, զարմտիս կալոցն կրեն, եւ զգինիս հնձանաց առնուն, եւ վիշապք զտոհմականս անդեոցն ծծեն» (*Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 194*):

Հայրեններում շատ հանդիպող «թուխ», «թուխ մանուկ», «կտրիճ», «քաջ», «խաժ» բառերի իմաստները եւս հեթանոսական ծագում ունեն: Ալիշանը գրում է նաեւ «թուխք» եւ «խաժք» հեթանոսական ոգիների մասին. «Թուխք եւ խաժք. - Առաջինն թուի գրադէտական կրօնից մէջ յիշեալ բազմապատիկ դիւաց մէկն կամ մէկ տեսակն, որ կոչուի Տուխս, հայերէն անունն միւսոյն հետ հիշելով՝ գոյներով զանազանեալ տեսակներ կարծեցնէ եւ ոչ միայն խոր խաւարի բնակիչ, ալ եւ բոլորովին զրկեալ ի լուսոյ կամ կոյր. ասոր նման եւ երկրորդ զայս ենթադրեմք շատ հեղ յիշուած աղօթից, «Ակն խաժիցն ճաքեցին (ճաթին), եւ ոչ տեսողաց Թխիցն՝ պատառեցին, եւ սոցունց համալատակ Զարացն սիրտ եւ կամք՝ սուգեալ՝ բեւեռամբ յանդունդս ընկսեցի, ընդ սկզբնաշատ Զարին բեկիարայ» (*Սույն տեղում, էջ 217*):

Այնուամենայնիվ, թե ինչ ծագում ունեն «Թուխ Մանուկները», դեռեւս ընդունելի կարծիք չկա: Որոշ գիտնականներ այն տեսակետն են հայտնել, թե «Թուխ Մանուկները» նախաքրիստոնէական ծագում ունեն: Կա այլ հայեցակետ եւս, որ դրանք դիտել են իբրեւ միջնադարյան նորաստեղծ ուխտատեղիներ (*Ա. Մնացականյան, «Թուխ մանուկ» հուշարձանների մասին, Պատմաբանասիրական հանդէս, 1976, համ. 2, էջ 190*): Խաչկունցը «Թուխ Մանուկների» պաշտամունքը կապում է ջրի պաշտամունքի հետ. «Ջրապաշտութիւնը դեռ վառ կմսա մեր ժողովրդի մէջ: Շատ տեղեր ջրի ակը սուրբ կհամարվի -

Թուխ մանուկներու ջրերը հիվանդություններ կը բժշկեն...» (*Սույն տեղում*):

Որ «Մանուկը» նաեւ կտրիճ, հերոս, քաջ, առաքինի իմաստն է ունեցել, երեւում է այդ բառի օգտագործման եղանակներից: Այսպէս, Ներսէս Շնորհալի, նկատի ունենալով առասպելական հերոս Տորքին, գրում է (*Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան հանելուկներ, Եր., 1979, էջ 341*).

Մանուկ մի կայր է Հայք գովան

Քան զՍամսոն ւ՛ այլ յաղթական:

Վեմ մի վերոյց մեծ տրամական,

Ի ծովն ընկեց, կանկնեաց արծաւ:

Միջնադարյան հայրենների մի զգալի մասը հորինված է քաղաքական ամուրի երիտասարդների պատվերով՝ գիւնարբուքների ժամանակ: Մի տեղ բանաստեղծ-գուսանն իր խոսքն ուղղակի հասցեագրում է ուրախության սեղանին բոլոր



րած մանուկներին (*Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Եր., 1940, էջ 341*).

Գիշերս ես ի քուն էի,

Քունս ի ներս սրտիկս երեւաւ,

Եկին ու բերին խապար:

«Քու սիրած եարն զքեզ մոռացաւ»:

- Մանկտիք, ձեր արեւդ ասեմ,

Լսեցի, լեզուս կապեցաւ:

Եկս մի օրինակ (*Սույն տեղում, էջ 179*).

...Յանչափ ջանայի իւր հետն,

Որ իւրմեն պագիկ մի առի,

Ի քաղցրութենէն եղբարկք,

Բռներ է սրտիկս, որ կայրի:

Մանուկ եւ կտրիճ կոչումների մասին հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել 10-րդ դարի կաթողիկոս Աւանիկա Մոկացոյ մի թղթում, որտեղ նա գրում է Գր. Նարեկացու հոր՝ Խոսրով Անձեւացու մասին: Վերջինս «յանկարծակի իբրեւ ի դիական հոգւոյն շարժեալ... յառաջեաց բաշաղմունս անհեղեղ: Քանզի հրամայեք մինչեւ մօրուս եկեալ զգլուխ խուզեալ, թե այսր աղագաւ կոչի կտրիճ, եւ զկնի մորուացն զհերսն ապա թողուլ,

երկայնիլ եւ մանիւ ցարունս, զի այսր աղագաւ կոչեն մանուկ...» (*Ա. Մնացականյան, «Թուխ մանուկ» հուշարձանների մասին, Պատմաբանասիրական հանդէս, 1976, համ. 2, էջ 194*):

Ինչպէս տեսնում ենք, դրանք երիտասարդական-հասակային որոշակի դասերի կենցաղավարման երբեմնի սովորակարգի դրսեւորումներ են, որ 10-րդ դարում օրինականացման իրավունք էին պահանջում Խոսրով Անձեւացու միջոցով եւ հանդիպում ուժեղ դիմադրության: Ամենաուշագրավն այստեղ երկու դասի ամկայությունն է՝ կտրիճների, որոնք ավելի փոքր են եղել (մինչեւ մորուք բուսեւը) եւ մանուկների (որոնց մորուքներն սկսել են երեւալ): Ըստ այդմ էլ նրանց միմյանցից տարբերելու նպատակով կտրիճների մազերը սափրել են, իսկ մանուկներինը թողել են եւ հյուսել:

Այսպիսով պարզ է դառնում, թե ինչու այդ կտրիճ-մանուկները կոչվել են թուխ մանուկներ: Այստեղ «թուխ» բառով ընդգծվել է նրանց վարքերի սեւությունը, ուստի թուխ մանուկ նշանակել է սեւավարս կամ սեւամազ մանուկ:

Այստեղից միանգամայն ակնհայտ է, որ սիրո այն բազմաթիվ հայրենները, որոնցում հանդիպում ենք «թուխ», «թուխ աջք», «թուխ վարս» ձեւերին, բոլորը վերաբերում են «Թուխ Մանուկ» կտրիճներին:

Հին աղբյուրներում հանդիպած գանազան մանուկների սոցիալական դերը հասկանալի է դառնում Թուխ Մանուկների օգնությամբ: Հիշենք Մ. Խորենացու վկայած այն փշրանքը, որի մէջ դրվատվում է Վարդգէս Մանուկը: Այս Մանուկը եւս հերոս է՝ վարդազույն գետերով, որն իջնում է Քասաղ գետն ի վար, կռում-կոփում Երվանդ արքայի դուռը՝ ամուսնանում նրա քրոջ հետ:

Հայտնի են նաեւ այլ Մանուկներ, օրինակ՝ հեքիաթներում հանդիպող Օձ Մանուկը, Փարման Մանուկը, որոնց սխրանքները նույնպէս ավարտվում են ամուսնությամբ:

Թուխ Մանուկները եղել են համաժողովրդական ուխտատեղիներ՝ կապված երիտասարդության, ինչպէս նաեւ մկրտության ու ամուսնության արարողությունների հետ (*Սույն տեղում, էջ 197*):

Թուխ Մանուկները ենթարկվել են քրիստոնէությանը, սակայն պահպանել են իրենց ժողովրդական ոգին, հեթանոսական էությունը:

Թուխ Մանուկները կապված են եղել նաեւ երկվորյակների պաշտամունքի եւ ջրապաշտության հետ: Ջրի հերոսներն ուղղակի կոչվում են թուխ, թուխ կտրիճ կամ թուխ մանուկ (*Սույն տեղում, էջ 201*).

Ես ունեի երկու թուխ ու թամ կտրիճ,

Անչափ քար ու խիճ երին,

Ինչուր հանին աղբյուրին ջուր խմեր՝

Ամեն կտրիճ ու մանուկ բերեր:

Թուխ մանուկները սոսկ աղբյուրներ պարգեւողներ չեն. նրանց ստեղծած աղբյուրներից ով որ ջուր խմեր, «ամեն կտրիճ ու մանուկ բերեր»: Հենց այսպիսի աղբյուրից ջուր խմեց Ծովինարը՝ ծնելով կտրիճ-մանուկներ՝ Սանասարին ու Բաղդասարին:

Ինչպէս տեսնում ենք, այս սիրո երգերում, որ կոչվում են հայրեն, քնարական հերոսը դիցաբանական Մանուկ-կտրիճն է, որ քաջ է, ազնիվ, բարի, միաժամանակ իր մէջ անձնագոհություն է մարմնավորում, եւ որի արմատները հասնում են նախաքրիստոնէության շրջանը, առնչվում Թուխ Մանուկ կոչված աստվածության հետ, որն էլ իր հերթին կապված է նախաքրիստոնէական հերոս-նախնիների եւ ջրի պաշտամունքի հետ:

Ուրեմն՝ Մանուկ-կտրիճ իդեալական հերոսը՝ սխրագործության ընդունակ երիտասարդի մարմնավորումը, հայտնվում է սիրո երգերում՝ իր հերոս նախնիների քաջարի ոգին ժառանգած, արտահայտելով իր մերժված ու վայելած սիրո տառապանքն ու բերկրանքը:

Վարդան ԵՂԻՍԱՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 3

ԱԼ-ՄՈՒԹԱԳԻԳԻ ՄԱՍԻՆ

Ահա թե ինչ պատմեց ինձ Աբու-ալ-Հասան Ահմադ իբն Յուսուֆ ալ- Ազրակն իր հոր խոսքերից, որ նրան պատմել էր հետեւյալը.

«Ալ-Մուկաֆակի եւ ալ-Մութադդի ժամանակ ես Բաղդա ալ-Լանի գրագիրն էի եւ սովորաբար նրա հետ մտնում էի նրա պալատը ու նրա հետ էի լինում: Մի անգամ տեսա՝ նա կենդանվույն խորովեց Շայլամ կոչված Մուհաիա մեղ իբն ալ-Հասան իբն Սահալին:

Աբու-ալ-Հասանը հարցրեց հորը՝ Բաղդըն ինչպէս արեց դա, եւ ինչն էր դրա պատճառը: Ի պատասխան՝ հայրն ասաց. «Ալ-

Վասիկի որդիներից մեկը հիմնավորվեց Մանսուրա քաղաքում եւ պայքար ծավալեց խալիֆի գահի համար՝ հենվելով Շայլամի օգնության վրա, որին դարձրել էր իր վեզիրը, եւ որը մայրաքաղաքի շատ բնակիչների՝ խաշիմների, դատավորների, զորավարների, զինվորների, Բաղդադի խուժանների եւ այլ կարգի սրիկաների անունից հավատարմության երդում էր տվել նրան: Նրա ուժերն աճում էին, եւ ժողովրդի մեջ տարածվում էր նրա անունը, այնպէս որ նա վճռեց, վերջապէս, բացորոշ հայտնվել քաղաքում եւ ամրապնդվել այնտեղ, որպէսզի անմիջապէս գրավի ալ-Մութադդի խալիֆի պալատը, երբ իրեն հաջողվի բռնել խալիֆին: Բայց ալ-Մութադդիդ, ամեն

ինչ իմանալով, բացի գահի հավանկորդի անունից, հարձակվեց Շայլամի տան վրա եւ ձերբակալեց նրան: Տանը գտնվեցին նրանց ցուցակները, ովքեր ուզուրպատորին հավատարմության երդում էին տվել: Շայլամը, լսելով եղելության մասին, փախավ քաղաքից:

Ալ-Մութադդիդ հրապարակավ այրել տվեց այն ցուցակները՝ երկյուղ կրելով, որ զինվորները լսելով, որ իրեն հայտնի են այդ ցուցակի բոլոր անունները, կմտածեն, թե իրենց հետ նա կվարդի այնպէս, ինչպէս Շայլամի հետ:

Նա հետո այդ գործով սկսեց հարցաքննել Շայլամին, եւ սա ամեն ինչ խոստովանեց՝ թաքցնելով միայն հավակնորդի անունը:

Նախապէս ալ-Մութադդիդ նրա հետ լավ էր վարվում՝ հուսալով նրանից իմանալ այդ անունը, բայց Շայլամը հրաժարվում էր եւ երկար բանակցությունից հետո ասաց. «Երբվում եմ ալլահով, ես քեզ չեմ ասի նրա անունը՝ թեկուզ ինձ կենդանի խորովես: Այնժամ ալ-Մութադդին իր մերձավորներին հրամայեց բերել երկար ու ծանր ձողեր, որոնցով վրան են կապում, եւ Շայլամին ամուր կապել տվեց դրանց վրա, հետո ամուր բերել տվեց, եւ դարսեցին աղյուսների վրա՝ կապվածի աչքի առաջ: Ապա կրակ արեցին, եւ խալիֆի ծառաները Շայլամին պատում էին կրակի վրա՝ մինչեւ որ մահացավ:

Դրանից հետո ալ-Մութադդիդ հրամայեց կործանել քաղաքի պարիսպը, եւ իսկապէս սկսեցին քանդել, բայց այդ ժամանակ խաշամիտները հավաքվեցին ու հայտարարեցին, որ այդ պա-

րիսպն իրենց հպարտությունն էր եւ անցյալի հուշարձան: Այնժամ ալ-Մութադդիդ հրամայեց դադարեցնել պարսպի ավերումը, բայց ազատեց պահակներին, որոնք պարիսպը հսկում էին, եւ հեշտացրեց պարսպին մոտենալը, որից հետո այն ամայացավ, եւ քաղաքացիք սկսեցին մաս-մաս կրել այնպէս, որ մի քանի տարի անց դրա մեծ մասն իրենց ավերեցին: Բացի այդ, նրանք այն հողի հաշվին, որի վրա կառուցված էր պարիսպը, ընդլայնեցին իրենց տները, որ կից էին, եւ ալ-Մութադդիի վեզիրը հարկ սահմանեց մասնավոր տների՝ այդ կերպ գրաված տարծքի համար: Դա մեծ դրամական մուտք ապահովեց, բայց արդեն մի քանի տարի անց հանգեցրեց քաղաքի աստիճանական կործանմանը եւ հասցրեց այն աստիճանին, որում այժմ գտնվում է քաղաքը:

Շարունակությունը՝ էջ 8



- Տե՛ր հայր, գիտե՜ք, որ մինչ քրիստոնեությունը կինը տղամարդուն հավասար անձ չէր համարվում՝ հակառակ իր արժանիքներին: Միայն քրիստոնեության շնորհիվ է, որ կինն իր տեղը գտավ մարդկային քաղաքակրթության մեջ: Քրիստոնեությունը բարձրացրեց կնոջը՝ որպես կենսունակ ուժի. կինն օժտված է նվիրումի, սիրո, հեզության, հնազանդության, քաղցրության շնորհներով, եւ քրիստոնեությունը, որ իր էությամբ սեր է, արժեքավորեց կնոջը՝ «խավարի տաճարից» դարձնելով «լույսի տաճար»: Եվ այս բոլոր օրհնությունների սկիզբը դրեց սբ Մարիամ Աստվածածինը: Մանրամասնե՛ք, տե՛ր հայր, խնդրում եմ: Ինչպե՛ս:

- Քրիստոնեության հիմքում ընկած է աստվածային ճշմարտությունը, որովհետեւ քրիստո-

նեական հավատը կառուցված է Քրիստոսի Անձի վրա, իսկ այն, ինչ ծագում է Տիրոջից, ունի կատարյալ ներդաշնակություն: Քրիստոնեությունն առաջ բերեց աստվածային այն ճշմարտությունը, որ Աստծո կողմից ստեղծված երկու անհատները՝ Ադամն ու Եվան, նույն Աստծո պատկերն ու նմանությունն ունեն եւ օժտված են նույն շնորհով, սակայն նրանցից յուրաքանչյուրը կոչված էր այլ ծառայության, առաքելության: Նրանք իրար չէին հակասում, մեկը չէր ստեղծված իբրեւ թագավոր, մյուսը՝ իբրեւ հպատակ, այլ ստեղծված էին իբրեւ «տեր» եւ «իշխան», որոնք պետք է լինեին տերը արարչագործության եւ զարգացնելիս այն: Եվ ավելին՝ նրանցից մեկն օժտվեց մի հատկությամբ, որի պատճառով էլ նրան տրվեց Եվա անունը, որը

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ

Ձեր հարցերին պատասխանում է Մայր Աթոռի արխիվի տնօրեն

Ասողիկ քահանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ:

Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից

Անժելա ԿԱՉԱՏՐՅԱՆԸ:

նշանակում է կյանք: Ադամն իր աստվածաշնորհ իմաստությամբ կարողացավ տեսնել նրա մեջ աստվածային այդ շնորհը եւ նրան տվեց մի անուն, որն այլեւս ճշտեց նրա դիրքն արարչության մեջ: Եվ Ադամն ու Եվան իրարից անկախ չստեղծվեցին, այլ ստեղծվեցին այն նյութից, որը միավորում էր նրանց, եւ քրիստոնեական Եկեղեցին աստվածային այդ ճշմարտության հիման վրա սահմանեց կնոջ եւ տղամարդու դերը, նրանց ծառայությունը մարդկային կյանքում եւ դա նվիրագործեց սուրբ Պապի խորհրդով:

- Եկեղեցու հայրերի գրվածքներում հանդիպում ենք «Մահացյալ Եվան կենդանացավ Աստվածամոր միջոցով» արտահայտությանը: Ինչպե՛ս կբացատրեք, տե՛ր հայր, խոսե՛ք առհասարակ «Եվա-Աստվածամայր» կապի մասին:

- Աստվածամայրը քրիստոնեության մեջ ճշտեց կնոջ դիրքը, որովհետեւ նա ոչ այլ ոք էր, եթե ոչ Եվայի սերնդի շարունակողը: Սուրբ Գրքում ասվում է, որ դեռեւս դրախտում եղած ժամանակ թշնամություն էր դրվել կնոջ եւ օձի սերնդի (այլաբանորեն՝ սատանայի) միջեւ, եւ կնոջ սերնդից ելածը պիտի ջախջախեր օձի գլուխը, այսինքն՝ ոչնչացներ չարը, հետեւաբար Եվան ուներ շատ կարեւոր մի առաքելություն՝ կյանք պարգեւել, «աճեցեք ու բազմացեք» պատգամն իրականացնել, եւ լույս աշխարհ պիտի գար Փրկիչը՝ Մեսիան, Որն էլ պիտի իրականացներ այդ մարգարեությունը: Հետեւաբար Աստվածամայրն իր հանգամանքով վերադարձրեց մարդկության համար կորսված կերպարի ամբողջությունը, եւ դրանով ոչ թե վերականգնվեց կնոջ հավասարությունը մարդկային կյանքում, այլ Քրիստոսը պարզապես վերանորոգեց նրա մեջ այդ ամենը, եւ Աստվածամայրն էլ իր սրբությամբ, առաքինություններով շնորհն ընդունեց Արարչի կողմից՝ դառնալու Փրկչի մայրը, եւ դրանով էլ վերականգնվեց Եվայի ամբողջական կերպարը: Մեզ համար հիմքն աստվածային ճշմարտությունն է, եւ այսօրվա հասարակության համար էլ դա պիտի դառնա առաջնորդողը, եւ ոչ թե այն կեղծ շարժումները, որոնք ուզում են վերականգնել այս կամ այն խավի իրավունքները: Այդ իրավունքները հավիտենապես որոշված, հաստատված են, պարզապես մեր գիտակցության մեջ պիտի հաստատուն կերպով մնան այս կամ այն արարածի կոչումը եւ գործառույթը, որովհետեւ ամեն մեկն այս կյանքում ունի իր կոչումն ու գործառույթը:

Շարունակությունը՝ էջ 8

Հայկական թեմաների մարմնավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

Սկիզբը՝ էջ 2

Այս երկար պատմության մեջ գրողը կարծես ձգտում է ինքնաճանաչման եւ ինքնաներման» (տե՛ս P. Najarian, նույն տեղում): «Հիշողության դուստրերը» վեպն այլ կերպ է բնութագրել Մայքլ Վեսլին. «Փիթեր Նաջարյանն ստեղծել է մի գործ, որում ավելի շատ օտար կոլորիտ կա, քան ուրեւ է այլ երկում, որին կարելի է հանդիպել ամերիկյան գրականության մեջ: Ամերիկահայ գրողի վեպն արտացոլում է պայքարը մի ժողովրդի» (տե՛ս P. Najarian, նույն տեղում): Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել ներկայացված գրախոսականներից, Փիթեր Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպն ավելի բարձր է գնահատվել, քան «Ուղեւորությունները»: Սա միանգամայն բնական է, քանզի «Ուղեւորությունները» գրողի առաջին վեպն է, ուստի եւ այն չի կարող գերել լինել որոշ թերություններից, իսկ «Հիշողության դուստրերը» ավելի հասուն գործ է եւ ստեղծվել է այն ժամանակ, երբ Նաջարյանի կենսափորձը, ինչպես նաեւ ստեղծագործական փորձն անհամեմատ ավելի հարուստ էին, քան նախկինում: Առհասարակ շատ քիչ գրողների է բախտ վիճակվում ճանաչման հասնել եւ գնահատանքի արժանանալ երիտասարդ հասակում: Այդ փոքրաթիվներից էր արեւմտահայ ականավոր բանաստեղծ Պետրոս Դուրյանը, որը կարողացավ գրավել համաշխարհային պոեզիան՝ ապրելով ընդամենը քսան տարի: Վաղահասուկ հանճարներից էր նաեւ աշխարհահռչակ անգլիացի բանաստեղծ Ջոն Զիթսը, որն ապրելով լոկ քսան հինգ տարի՝ անչնչելի հետք թողեց համաշխարհային գրական-

ության մեջ: Նույն բանը կարելի է ասել անգլիացի հանճարեղ պոետ Պետրի Շելլիի մասին, որին եւս վիճակված չէր երկար ապրել, սակայն վիճակված էր ընդմիշտ մնալ համաշխարհային գրականության պատմության մեջ: Փիթեր Նաջարյանն անհայտորեն այդ վաղահասուկներից չէ: Սակայն այստեղ հարկ է հաշվի առնել մի կարեւոր հանգամանք. վերը հիշատակված բոլոր արվեստագետները բանաստեղծներ են, իսկ բանաստեղծները, որպես կանոն, ավելի վաղ են դրսեւորում իրենց բնատուր տաղանդը: Փիթեր Նաջարյանը, ինչպես հայտնի է, արձակ երկեր է ստեղծել, իսկ արձակագիրներին հաճախ ավելի երկար ժամանակ է հարկավոր իրենց ստեղծագործական ձիրքը զարգացնելու համար:

Այժմ առավել հանգամանորեն անդրադառնանք «Հիշողության դուստրերը» երկին: Վերջինիս մեջ, ինչպես արդեն ասվել է, Փիթեր Նաջարյանը զարգացնում է այն թեմաները, որոնք նախկինում արծարծվել էին «Ուղեւորություններ» վեպում: «Հիշողության դուստրերը» մի անսովոր ստեղծագործություն է, որում ներկայացված նկարները ցույց են տալիս, թե ինչպես են միաձուլվում անձնական եւ կոլեկտիվ պատմությունները: Ինչպես «Ուղեւորություններ», այնպես էլ «Հիշողության դուստրերը» գործերում շարադրողը փնտրողի մեջ է, բայց այս անգամ դա հավերժական կանացի նախասկզբի փնտրտուք է: Վեպի հերոսուհին ներկայացնում է ողջ պատմությունը՝ տեսնանք առաջացնելու եւ արվեստագետին ոգեշնչելու իր անսպառ ունակությամբ:


Թեեւ գրքի հերոսը՝ Չիկը, ակնհայտորեն սիրահարված է Դոկտես անունով մի կնոջ, սակայն պատմության ամենագործող կանացի ուժը մարմնավորում է նրա մայրը, որը վեպում երեւան է գալիս միջին տարիքում, ինչպես Մելինան՝ «Ուղեւորություններ» երկում: Այժմ «Հիշողության դուստրերը» վեպի հերոսուհին մուտք է գործել իր կյանքի առավել հասուն շրջանը: Արձակով, որում արտացոլված է տարիքն առնող կնոջ գեղեցկությունը եւ զգայականությունը, Նաջարյանը հարգանքի տուրք է մատուցում մի կնոջ, որն իր կյանքի վերջին շրջանում շարունակաբար նույնացվում է «հավերժականի» հետ. «Նա մի ծեր կին է, որի աչքերը նման են նստած ցուլի աչքերին, նրա շուրթերը կույզ են գալիս, երբ նա հանում է իր շարժական ատամները եւ խոզանակում սողայով: ... Նրա եղունգները նման են ոչ այնքան եղունգների, որքան սնկային հիվանդությամբ ախտահարված կոշտուկների: Նրա ոտքերը ծանր են, ինչպես գետինը, դրանց վրայի կոշտուկները կարծես ծայռեր եւ ծառեր լինեն» (տե՛ս P. Najarian, Daughters of Memory, City Miners & Books, 1986, էջ 117):

Այս հայ կնոջ դիմանկարը, որը կայունացրել է իր որդու կյանքը գրախոսի պարզությամբ եւ կարծրությամբ, իր հաստատումն է գտնում մի խումբ ֆրեզկոյաբան կանանց նկարում: Այդ կանայք բամբասում են նույնքան բնական ձեւով, որքան դժի սերմ կուտեին:

Հավելենք, որ Փիթեր Նաջարյանն անհայտորեն շատ լավ է գզում վերը հիշատակված կանանց կյանքի ռիթմը, նրանց խոհերը, այն, թե ինչպես են նրանց

մտքերը թարգմանվում հայկական բարբառներից ամերիկյան անգլերենի: Այս փոխանցումը հեղինակը ներկայացնում է հումորով եւ մեծ սիրով: Երբ նրանց փոքր բարբառները վերհանում են անցյալի ողբերգությունները, արմատախիլ արված կյանքի աշխարհիկ դավաճանությունները, նրանց մտքի կենսունակությունը, ծեր կանանց խումբը վերածվում է հունական երգչախմբի հայ-ամերիկյան տարբերակի: Նրանց իմաստությունը վիթխարի է: Նրանք շատ բան են տեսել եւ հասել են այն կետին, երբ ամեն բան ընկալվում է ամբողջությամբ եւ իրական գույներով:

Ամերիկահայ արձակագիրը զարմանալի ներդաշնակությամբ միաձուլում է իրական կյանքն ու արվեստը, թեեւ համոզմունք է հայտնում, որ «պատմության սարսափն անհնար է պատկերել, եւ որ այդ բոլոր պատկերները փոխակերպվում են, ու ամեն մի տառապանք պետք է վերածվի արվեստի» (տե՛ս P. Najarian, նույն տեղում, էջ 140): Նաջարյանի այս եզրակացությունը շատ նման է Նկարիչ Արշիլ Գորկու եզրահանգմանը, երբ նա դիմում է վերացական աշխարհին՝ տարագրության ցավից ազատվելու համար: Բայց, եթե Արշիլ Գորկու ուշադրության կենտրոնում էին աշխարհն է, ապա Փիթեր Նաջարյանի համար կարեւորը մշտապես անհասանելի, վերամարմնավորվող կինն է՝ նման այն կանանց, որոնք նա երբեւէ սիրել էր, ճանաչել կամ տեսել: Նաջարյանի «Հիշողության դուստրերը» գրքում տեղ գտած նկարները, հատկապես կանանց բազմաթիվ պատկերները ներդաշնակորեն լրացնում են հեղինակային տեքստը: Այս կանայք գերծ են



դերերից ու կարգավիճակից: Բայց եւ այնպես նրանք իրենց ուսերին են կրում գրողի անցյալի առեղծվածն ու հիշողությունները, ինչպես նաեւ այն տեսչանքը, որը նրան ստիպում է նկարել:

Նույնիսկ գրքի վերջում տեսչանքի եւ հաշտության միջեւ առկա լարվածությունը չի վերանում: Չիկի եւ մի թուրք մարմնավաճառի սիրախաղը տեսնելուց հետո մենք սլանում ենք Ֆրեզկո, որտեղ հայ ծերունիները վերահաստատում են կյանքի ներդաշնակությունը՝ անկախ անցած ուղուց:

Քնարականությամբ ողողված այս գիրքը հայ ժողովրդի անցյալը հրամայական կոնտեքստի մեջ է դնում: «Հիշողության դուստրերը» վեպն օգնում է հայերին հասկանալ իրենց իրենց եւ գտնել այն սերը, որով կարելի է ազատվել պատմական հիշողությունից: Վստահաբար կարող ենք փաստել, որ Փիթեր Նաջարյանի «Հիշողության դուստրերը» իրապես նոր խոսք է ամերիկահայ արձականում:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Այս հոդվածի նախընթաց հատվածները տպագրելիս Փիթեր Նաջարյանի լուսանկարների փոխարեն սխալմամբ օգտագործել ենք Փիթեր Բալաքյանին: Հայցում ենք մեր ընթերցողների ներողամտությունը:

1. Խորհրդահայ պատմագիտության կողմից երկար ժամանակ գերիշխող է եղել այն կարծիքը, թե Արմենական կուսակցության ծրագիրը համարվել է Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Յայաստանի ազատագրության» գրքով, որը լույս է տեսել 1889 թ. Մարտիում եւ բնականաբար չէր կարող լինել ավելի վաղ՝ 1885 թ., կազմավորված կուսակցության ծրագիրը: «Վարդապետարանը» թեեւ իր մեջ ներառում էր ազատասիրական ոգի ու գաղափարներ, սակայն որպես ծրագրային փաստաթուղթ՝ ստանդարտ ու դոգմատիկ ձեւակերպումներով անընդունելի կլինեի գործող կուսակցության համար: Բացի այդ՝ եական տարբերություն կար արմենականների ծրագրի եւ «Վարդապետարանի» միջեւ: Արմենականների ծրագրում պարզ ու հստակ նշված է հեղափոխությամբ արեւմտահայությանն ազատագրելու մասին, մինչդեռ «Վարդապետարանը» «անորոշ ձեւով կը խօսեր զենքի դիմելու մասին» (Վաչե Դադարեան, Արմենական կուսակցությունը, Բեյրութ, 1985 թ., էջ 19):

Բնորոշ է նաեւ այն խոսուս փաստը, որ արմենական գործիչներից ոչ մեկը չի նշում, թե «Վարդապետարանը» երբեւիցե ծառայել է որպես ծրագրային փաստաթուղթ կուսակցության գործունեության համար:

2. Արմենականների կուսակցության ծրագիրը ծնվել է տվյալ պահի եւ ժամանակի պահանջներից, ամբողջովին բխել Արեւմտյան Յայաստանում տիրող ընդհանուր իրավիճակից: Ծրագրի ստեղծման աշխատանքներին մասնակցել են կուսակցության լավագույն մտավորական ուժերը՝ Մկրտիչ Ավետիսյանի գլխավորությամբ:

Այն հետագայում ենթարկվել է մասնակի որոշ փոփոխությունների:

Կուսակցության ծրագրի հեղինակները հետեւողականորեն հաշվի էին նստել տվյալ պահին երկրում գոյություն ունեցող ռեալ իրավիճակի հետ եւ, որպես առաջնահերթ նպատակ, մատ-

Հայկական հարցի լուծման ուղիներն արմենականների ծրագրերում



նախել դժոխային կացությունը վերափոխելու ուղին:

Այդ ուղին հեղափոխությունն էր:

Ծրագիրը հռչակում էր. «Արմենական կազմակերպությանն ապատակն է յեղափոխութեամբ Թուրքիայի հայ ժողովրդեան համար իրավունք ձեռք բերել ինքզինքն ազատօրէն կառավարելու» (Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947 թ., էջ 81-82):

Ծրագրում նշվում է, որ կուսակցությունն իր ներքին ուժը գոյացնելու է ժողովրդի բոլոր խավերից՝ առանց դասակարգային իմաստով խտրականություն ղնելու:

Կուսակցությունը գտնում էր, որ չպետք է ուժերը ցրի այլ ազգերի շրջանում հեղափոխական շարժումներ առաջ բերելու նպատակով, քանզի, հայ ազգի ու մյուս ցեղերի միջեւ զգացման, աշխարհայեցողության, պահանջների ու զարգացման մեծ տարբերություններ կան, որով ազգի հեղափոխական շարժումը կա-

րող էր դանդաղել ու կնճռոտվել (Նույն տեղում):

3. Իսկ ինչպե՞ս է ի՞նչ միջոցներով էր Արմենական կուսակցությունն արեւմտահայությանը նախապատրաստելու ազատագրական հեղափոխության: Այդ մասին ծրագրում հետեւյալն է նշվում. «Արմենական կազմակերպութիւնն իր նպատակին հասնելու համար կաշխատի ներքին ոյժ գոյացնել, միացնելով իրարու հետ միեւնոյն գաղափարի ծառայող հայ հայրենասերները եւ կեդրոնական ուղղութեան ենթարկելով ժողովուրդը արթնցնել, յեղափոխական գրականութեամբ, ընտիր դաստիարակութեամբ, գործի ազնիւ կենցաղով եւ քարոզով գաղափար տարածել, կանոնաւոր եւ յարատեւ յարաբերութիւն մշակել, զինակրթութեան եւ կարգապահութեան վարժեցնել, ինքնապաշտպանութեան զգացում արծարծել, զենք եւ դրամ հայթայթել, զինուորական շարժուն խմբեր կազմակերպել եւ ի հարկին գործածել եւ ընդհանուր շարժման պատրաս-

տել, երբ մասնաւոր արտաքին հանգամանքներն ալ մեզ նպաստաւոր համարուին» (Նույն տեղում):

4. Արմենական կուսակցության ծրագիրը կառուցված էր ռեալ, իրական հողի վրա՝ նկատի ունենալով այն դժնդակ պայմանները, որում հայտնվել էր արեւմտահայությունը:

Այս տեսակետից տարօրինակ ու անարդարացի է հնչում այն պնդումը, թե «այդ ծրագիրը դեռեւս հեղհեղուկ էր, իսկ նրա կազմողները հստակ պատկերացում չունեին ապագա Յայաստանի սոցիալ-քաղաքական հարաբերությունների եւ նրա ազատագրման ուղիների մասին» (Յայկական սովետական հանրագիտարան, Ե., 1976 թ., հ. 2, էջ 94):

5. Արմենականներն ընտրել էին շատ զգույշ տակտիկա՝ ձգտելով հայ ժողովրդի լայն խավերի մեջ արթնացնել ինքնապաշտպանության գիտակցությունը եւ «ղնել զայն ամեն տեղ ինքզինքը պաշտպանելու վիճակին մէջ» (Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 73):

6. Արմենականների ծրագիրը չէր հետապնդում ընկերվարական-միջազգային նպատակներ, սոցիալական հեղափոխություն եւ հնարավոր, ընդունելի վարչաձեւը թողնում էր ապագային՝ առաջնահերթը հռչակելով որը արեւմտահայության ազատագրումը թուրքական լծից: Սոցիալ-քաղաքական զարգացման որեւէ ուղի ընտրելու հնարավորության եւ հավանականության մասին կարելի էր մտորել եւ ծրագրում նշել միայն այն դեպքում, երբ արեւմտահայությունն ապահովված կլիներ ֆիզիկական բնաջնջման առօրյա-ամենօրյա սպառնալիքից:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՉԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Եվ դա՝ սկսած առաջին տպագիր ակնարկից («Անի-ծոր», 1961) եւ առաջին գրքից («Օգոստոս», 1967) մինչեւ վերջին ստեղծագործությունները, որոնք ի մի են բերված «Ծառերը» (1978), «Կանաչ դաշտը» (1978), «Տերը» (1983) ժողովածուներում: Այդ ընթացքում իրապաշտական թանձր գույներով գրողն ստեղծել է ետպատերազմյան տարիներից մինչեւ այսօրվա կյանքն ընդգրկող հայկական գյուղի թանձր պատկերը: Գյուղն իր սոցիալական, բարոյական, կենցաղային վիճակով, մեծ աշխարհի հետ ունեցած տարատեսակ կապերով նրա համար դառնում է այսօրվա կյանքի խնդիրների բացահայտման հիմնական նախադրյալ:

Մաթեոսյանի բոլոր գործերը ծննդաբանորեն կապված են իրար. դրանք, կարծես, մի մեծ ու բազմաճյուղ վեպի առանձին գլուխներ լինեն: Նա տարբեր վերնագրերով, միեւնույն ստեղծագործական ուղղվածությամբ վերարտադրում է Նույն շրջապատի մարդկանց կյանքի պատմությունը: Կայուն ու անփոփոխ են թե՛ նրա ստեղծագործության աշխարհագրական միջավայրը, թե՛ կենսական վիճակներն ու հարաբերությունները, թե՛ հերոսները, որոնք միեւնույն նկարագրով եւ կյանքի զգացողությամբ երբեմն

հանդես են գալիս տարբեր գործերում:

Գյուղը Մաթեոսյանի ստեղծագործության մեջ միայն միջավայր չէ, որտեղ կատարվում են գործողությունները: Գյուղի առկայությունն սկզբունքային էլակետ է նրա համար, քանի որ այսօրվա մեր ջղային, նյարդային ժամանակներում, արագությունից ու թափից գլուխը կորցրած, ճշգրիտ հաշվարկումների, մարդմեքենաների դարում, երբ ամեն ինչ գնում է դեպի մանրացում, փոքրացում, հաշվարկում ու պլանավորում, նա բնության ձայնին հավատարիմ մնալու խնդիրներ է արծարծում եւ խորքում, ամեն առիթով, բնության ձայնը, բնական վիճակը հակադրում մարդու մեջ մարդ անհատին սպանող «քաղաքավարի» միջամտությանը:

Այս տեսակետից Մաթեոսյանի ստեղծագործության համար անկյունաքարային նշանակություն ունի «Գոմեշը» պատմվածքը: Մի ստեղծագործություն, ուր վարար ու հորդուն եռքով նկարագրվում է բնության ազատ տարերքը: Զեղինակը գնում է կեցության հիմքերի որոնման ճանապարհով, որոնք կարգավորում են կյանքը: Մի կողմից՝ տեսակի, տոհմի շարունակության բնական տարերք, մյուս կողմից՝ քանոնով գծագրված ու միլիմետրերի ճշտությամբ հաշվարկված կյանք,

մի կողմից՝ բնության շնչառություն, սարերի, ծաղիկների, հովի ու հողի բուրմունք, մյուս կողմից՝ արդյունաբերական զարշառու: Պատմվածքի մեջ դեմադրեմ կանգնում են բնության նախնական ու ազատ տարերքը եւ «օրինականացված» կյանքը: «Հարբած վիճակում հասարակության լուսամուտների տակ երգելու համար նկարիչ Ռուբեն Կոստանյանի գանգուրները միլիցիան խուզել էր եւ նրան չորս օրով տվել ասֆալտ էփող-մամլող հիմարկին», - պատմում է հեղինակը եւ անմիջապես ձայնը տալիս իր հերոսին՝ Ռուբեն Կոստանյանին. «Սրիկաներ, - ասֆալտը ճանկռելով՝ ասաց նա, - ստորներ, բռնադատիչներ... ինչո՞ւ ազատ են լեռան գոմեշը, թռչունը, քամին, թուփը, իսկ ես ազատ չեմ: Մամլակներ, ռոբոտներ, խորանարդներ, քառակուսիներ, շարդող-կտրող-խուզող-ձեռողներ...»: Այս ընդլվածում իր նկատելիորեն խոր պահված արմատներն ունի նաեւ «Մենք ենք, մեր սարերը» վիպակում, ուր սարերի օրենքներով մեծացած մարդիկ բացականչում են. «Աշխարհը չինել եք հաշվապահություն»: Մի կողմից վայրի ու ազատ լեռնականներ՝ իրենց «հովիվների հանրապետությամբ», մյուս կողմից՝ մանրուքների մեջ թաթախված կյանք ու դրանից աճանցված «հաշվապահություն»: Առաջինի կրողները



Չավեն Քոչարյանը, Իշխան Անտոնյանը, Պավլեն, Ավագը եւ մյուս հովիվներն են, իսկ երկրորդին՝ լեյտենանտ Զակոբյանը եւ հատկապես՝ Ծառուկյանը: Լեյտենանտ Զակոբյանի համար հեղինակը դեռ արդարացնելու եւ նրան ներելու տեղ թողնում է, որովհետեւ նա նախ՝ առաջադրանք է կատարում եւ ապա՝ տեսնելով հովիվների ծանր աշխատանքը՝ կարող էր նաեւ ամաչել նրանց մոտ հարցաքննության գալու համար: Իսկ Ծառուկյանը բոլոր տվյալներն ունի դառնալու իր տեսակի մեջ անկրկնելի մի տիպ: Խիստ ու անզիջում է հեղինակն այդ կարգի մարդկանց հանդեպ, որոնց մեջ «մարդ տեսնում է իր չնչնությունը»: Անմիջապես հետեւում է հակադրությունը, որի խորհրդանշն ազատ ու հզոր լեռներն են: Լեռների օրենքներին ու բնության ձայներին վարժված մարդիկ՝ «հովիվների հանրապետության» ներկայացուցիչները, ունեն իրենց նիստու-

կացք, եւ նրանց ըմբռնումներին ու հարաբերություններին միանգամայն ավելորդ է արտաքին «օտար» աշխարհի միջամտությունը: Այդ միջամտությունն իրար դեմ է հանում հերոսներին եւ օրենքը, ինչի դեմ էլ բացահայտ է հեղինակի ընդլվածումը, քանի որ իրենց գործն անհաշվեկատ կերպով անող մարդիկ այդ միջամտության հետեւանքով դառնում են հաշվեկատու, դառնում մի քիչ «հաշվապահ», ինչն էլ գյուղացուն կտրում է հողից, մեռցնում է նրա մեջ գործի նվիրվածությունը, եւ բնության հարազատ որդին խորթանում է իր սար ու ձորին, կտրվում արմատներից, կորցնում հարյուրամյակների ընթացքում ձեւավորված, մշակված եւ իր համար ապրելու օրենք դարձած բարոյականության հիմունքները:

Շարունակելի
Հավիթ ԳԱՍՊՐԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ

Սկիզբը՝ էջ 6

- Կնոջ դերն իր վեհագույն ձեռնով դրսևորված է Աստվածամոր կերպարում: Նրա անձի մեջ խտացած է մայրության բարձրագույն արտահայտությունը: Բոլոր ժամանակներում էլ սուրբ Աստվածամոր կերպարը գերագույն օրինակ է եղել կնոջ համար: Ի՞նչ կարող է սովորել մերօրյա կինն Աստվածամոր կերպարից:

- Մեզ համար Աստվածամայրը գերագույն բարեխոսն է: Նրա նման մենք ունենք բազմաթիվ սրբուհիներ, որոնք իրենց կյանքով, վարքով կնոջ կերպարի ճշմարիտ օրինակներ են: Աստվածամոր պարագայում առավել առանձնանում է նրա՝ Փրկչի մայրը լինելու հանգամանքը, եւ չպետք է մոռանանք, որ նա շատ լավ գիտակցում էր, թե Ում է լույս աշխարհի բերել եւ Ում է դեպի խաչն առաջնորդում: Նա, այդ ամենը գիտակցելով՝ հանդերձ, համապատասխան նկարագիր եւ կենցաղ ուներ: Աստվածամայրն ուրիշ էր, ուրիշ առաքելություն ուներ... Ամեն ոք Աստվածամայր լինել չի կարող, բայց կարող ենք նրա առաքելությունների հետեւորդ լինել: Բոլոր ժամանակներում կնոջ համար նրա կերպարն առաջնորդող պետք է լինի, սակայն ցավով պիտի արձանագրենք, որ այսօրվա մեր կյանքում հայ կանանց, աղջիկների համար շատ հաճախ առաջնորդ են հանդիսանում, այսպես ասած, երեւելի անձնավորություններ, որոնք պայմանավորում են նրանց ապրելակերպը, խոսելաձեւը, վարվելաձեւը, հագուկապը, եւ դրանք բոլորն անիրական են, այդ բոլորը մարդուն միայնակ են թողնելու այն հոգսերի, նեղությունների, տառապանքների մեջ, որոնք անխուսափելի են մարդկային կյանքում: Իսկ երբ դու քեզ առաջնորդող կերպար ես ընտրում մեկ ուրիշ ոլորտից, որն այլեւս դարերով ամրագրված, փորձության բովով անցած է, բնականաբար, այդ կերպարը քեզ իրապես կարող է ջանքեր եւ օգտակար լինել քո կյանքի բոլոր իրավիճակներում: Եվ այդ առումով կինը պիտի իմաստություն ունենա՝ իրեն առաջնորդող կերպարն ընտրելու հարցում: Առաջին հերթին կինն իր համար



պիտի ճշտի իր տեղը, դերը, կոչումը այս կյանքում. ինչի՞ն է ինքը ձգտում, ի՞նչ է ուզում այս կյանքում իրականացնել: Եթե նա հասկացավ այս ամենը, ուրեմն կերպարներն ընտրելիս էլ կունենա ճիշտ կողմնորոշում: Ուրեմն կնոջ դերն այսօրվա կյանքում մեկընդմիջ ճշտված պետք է լինի. սա չի նշանակում, որ կինը չպիտի ընտրի մասնագիտական աշխատանք... Բայց կինն ունի այն պակը, որը չունի տղամարդը. կինն է կյանք պարզեցում եւ իրականացնում Աստծո՝ «աճելու եւ բազմանալու» պարզեւ, եւ այդ պարզեւն իրականություն պիտի դառնա միայն բնական ճանապարհով: Այսօր կանայք կան, որոնք ամուսնացած չեն, բայց զավակ են ուզում ունենալ՝ այսօրվա գիտական «նվաճումները» օգտագործելով՝ իրենց անձնական ցանկությունը բավարարելու նպատակով: Սուրբ Եկեղեցին դեմ է այսպիսի երեւոյթներին: Եթե մարդն ուզում է սերունդ ունենալ, զավակ մեծացնել, ապա կա աստվածասահման ճանապարհը. չի կարելի բնությանը դեմ գնալ, Աստծո պատվիրանը խախտել: Դա ընդունելի չէ:

- Տե՛ր հայր, երջանկահիշատակ Գաբրեղիս Հովսեփյան կաթողիկոսն ասում է, որ «ընտանիքը նման է եկեղեցու, որի քահանան մայրն է»: Այս մեկ նախադասության մեջ, կարծեք, ամփոփված է ամեն ինչ՝ կնոջ դերն ընտանիքում եւ նրա առաքելությունն այս կյանքում: Բայց արդո՞ք կնոջ կոչումը միայն որդեծնությունն է:

- Ո՛չ, որդեծնությունը գլխավոր նպատակն է, բայց կինն ունի նաեւ այլ կոչում: Եթե ընտանիք է

կույթան պահպանումն է: Եվ դա է նաեւ անձնական երջանկության հիմքը. եթե ընտանիքի մեջ չկա այդ երջանկությունը, ապա ապերջանիկ կլինեն ե՛ւ տղամարդը, ե՛ւ կինը, ե՛ւ երեխաները, եւ բոլորի հայացքն ու միտքն այդ ընտանիքից դուրս կլինեն: Դրա համար նախքան ամուսնությունը, առաջին հերթին, երկուսն էլ իրենց համար պիտի ճշտեն մեկ կարեւոր հանգամանք՝ իրենք իրար գտե՞լ են համատեղ կյանքի համար, թե՞ ոչ: Քանի որ երբեմն ընտրությունը կատարվում է տարբեր՝ անցողիկ երեւոյթների հիման վրա, եւ երբ դրանք կորսվում են, միությունը քայքայվում է: Դրա համար կանայք եւ տղամարդիկ, մինչ ամուսնական ուխտը կապելը, իրար լավ պետք է ճանաչեն, եւ այդ ճանաչման մեջ իրենց համար ամենակարեւոր պետք է լինի անպայմանավոր սերը. եթե այն կա, ուրեմն իրենք իրենց կյանքի ընթացքում ամեն ինչ համերաշխորեն կանցկացնեն: Ո՞վ ասաց, որ ընտանիքում վեճ, կռիվ, հակառակություն, անհասկացողություն չի լինում. ամուսինները նույնիսկ օրերով կարող են իրար հետ չխոսել, բայց երբ կա այդ սերը, ամեն բան հաղթահարվում է: Եվ ես իմ խոսքում միշտ նշում եմ, որ անտրմալ է այն ընտանիքը, որտեղ չկան գծություններ, ուրեմն այնտեղ ամեն մեկն իր անձնական կյանքով է ապրում, ընդհանրական երջանկությունը որեւէ մեկին չի հուզում:

- Ամփոփենք մեր գրույցը, տե՛ր հայր, եւս մեկ անգամ շեշտելով, թե որն է կնոջ առաքելությունն այս կյանքում, եւ ինչի է կոչված կինը: Ի՞նչ կպատգամեք մեր ընթերցող կանանց:

- Ամենից առաջ կինը կոչված է Աստծո պատվիրանն իրականություն դարձնելու. «Աճեցեք եւ բազմացեք եւ լցրեք երկիրը», որովհետեւ երկիրը լցնելով՝ մենք ապահովում ենք երկնային արքայության մեջ բնակիչների թիվը, ապահովում ենք երկինք տանող այդ ճանապարհի ամրությունը, որը Սուրբ Եկեղեցին է, որովհետեւ ամեն մի բարեպաշտ քրիստոնյա Եկեղեցու հիմքում այն ամուր, կարծր քարն է դառնում, որի վրա բարձրանում է հոգեւոր շինվածքը: Եվ ամենակա-

րեւորը. պատրա՞ստ է կինն իրեն ամբողջապես նվիրելու ընտանեկան կյանքին: Մերօրյա կյանքում կան արժեքներ, որոնք աստվածաստեղծ են, եւ դրանք պետք է պահպանել: Առաջին ընտանիքն Աստված ստեղծեց դրախտում, եւ սրա վերաբերյալ հայոց հայրապետներից երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյանը մի հրաշալի ստեղծագործություն ունի՝ «Դրախտի ընտանիք» գիրքը, որը կարող է Սուրբ Գիրք դառնալ ընտանիքի համար: Մեր սիրելի կանայք պետք է իրենց համար պարզեն, թե որն է իրենց կոչումն այս կյանքում: Եթե պարզեցին այդ, ուրեմն իրենց կյանքն ավելի հեշտ կընթանա: Եթե իրենք ցանկանում են ընտանիք կազմել եւ միեւնոյն ժամանակ նվիրվել մի աշխատանքի, որն իրենցից պահանջում է ամբողջական նվիրում, ուրեմն երկուսում էլ կծախողվեն: Դա չի նշանակում, որ դու պիտի փակ կյանք ապրես, ո՛չ, պիտի լիարժեք ապրես կյանքը, որովհետեւ դու ես կյանքը տվողը: Եթե դու շնորհ ունես երգելու, երգելու, ուրեմն քո կյանքը նվիրիր դրան, բայց մի՛ ասա. «Ես սա էլ կանեմ, այն էլ», որովհետեւ այդպես չի կարող լինել: Այլ հարց է, որ երբ քո զավակները հասնեն որոշակի տարիքի եւ ինքնուրույն կյանքով սկսեն ապրել, դու ազատ կլինես տնօրինելու քո ժամանակը... Դրա համար ամենկարեւորը հասկանալն է կոչումը, առաքելությունը՝ չմոռանալով, որ արդեն յուրաքանչյուր կին ի վերուստ տրված առաքելություն ունի, որ է՝ մայրանալը եւ մայրական խնամք տաձելը, ինչպես Աստվածամայրը, ինչպես Սուրբ Եկեղեցին իր սերունդների հանդեպ: Կինն է աղբյուրը ընտանեկան սիրո, եւ այդ աղբյուրը պետք է զուլալ եւ մշտաբուխ լինի: Ես հավատում եմ եւ վստահ եմ, որ եթե կինն ամբողջական նվիրում ունեցավ, տղամարդն էլ նվիրում կունենա, իսկ եթե կնոջ կողմից նվիրումը պակասեց, տղամարդն էլ պիտի սառնի դեպի իր կինը, ընտանիքը եւ իր համար այդ շերմության ուրիշ աղբյուր պիտի գտնի: Այս դեպքում հասարակության մեջ էլ կլինեն լուրջ խնդիրներ, ինչն էլ կբերի ավելի մեծ ավերակներ:

ԱԹԹԱՄՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 5



Այս պատմությունն ինձ հիշեցնում է մի ուրիշը, որ գտել եմ Աբու Ջաֆարիբն ալ-Բախլուլի գրառումներում: Նա պնդում է, որ Մուհամմադ իբն Ահմադալ-Խուշամին իրեն հայտնել է հետեւյալը. «Ալ-Խաջաջ իբն Յուսուֆը մի անգամ Մուհամմադ իբն ալ-Մուսթաֆին կարգադրեց բռնել Ազադա-մարդ իբն ալ-Ֆիրիսիդին, ծաղկել նրա ուղղուձեղը, մինչեւ նրանից փող կորզելը, որ նա պարտք էր: «Բայց, - ասաց ալ-Մուհամմադը, - ինձ հաջողվեց շատ մեղմ միջոցներով նրանից ստանալ երեք հարյուր հազար դիրհեմ: Ալ-Խաջաջը դրանով չբավարարվեց եւ ինձնից վերցնելով՝ նրան հանձնեց իր դահիճ Մաադիին ձեռքը, որն սկսեց ծեծել նրան՝ հաշմելով նախ ձեռքը, ապա եւ՝ ոտքը: Մի անգամ, երբ անցնում էի փողոցով, Մաադիին Ազադամարդին դուրս էր բերել իմ ճանապարհին՝ գոմշի վրա

հեծած: Ազադամարդն ինձ խնդրեց մոտենալ եւ ասաց. «Քեզ նույնն էր հանձնարարված, ինչ սրան, բայց դու ինձ հետ լավ էիր վարվում, ուստի ես հոժարակամ վճարեցի ինչ-որ գումար, բայց երդվում եմ ալլահով՝ ինձնից ոչ մի դիրհեմ հնարավոր չէ կորզել ուժով: Իմ երեսուն հազար դիրհար գումարն այսինչի մոտ է: Դա վերցրու՝ իբրեւ քո բարի վերաբերմունքի պարգև»: Ես նրան վստահեցրի, որ իրենից դրամ չեմ վերցնի, քանի որ այդպիսի դժվարին կացության մեջ է: Այնժամ ինձ հարցրեց. «Դու գիտե՞ս արդյոք՝ մարգարեի ինչ ասույթն եմ լսել քո հավատակիցներից»: Ես պատասխանեցի, որ չգիտեմ: «Երբ ալլահը մարդկանց բարիք է ցանկանում, նրանց վրա նշանակում է լավագույններին, եւ անձրեւը ժամանակին է հղում: Իսկ երբ վատն է կամենում, նրանց վրա կարգում է վատթարներին, եւ անձրեւն անժամանակ է տալիս»:



Ապա նա ջորիի վարորդին հորդորեց շարժվել, իսկ ես մնացի տեղում, մինչեւ որ եկավ ալ-Խաջաջի նվիրակը ու ինձ կանչեց նրա մոտ: Եմիրին ես գտա գազազած՝ մերկ սուրը դրած ծնկին: Նա ինձ հրամայեց մոտենալ: Իսկ ես երդվեցի, որ նրա մոտ չեմ գնա, մինչեւ որ նա չվերցնի սուրը ծնկից: Այնժամ ալլահը նրան ներշնչեց ծիծաղել եւ սուրն ու դանակ-

ները պահել, եւ նա ասաց. «Այդ կրակապաշտն ի՞նչ ասաց քեզ»: Ես պատասխանեցի. «Այն օրից, երբ դու ինձ պատվեցիր քո վստահությամբ, ես երբեք չչարաշահեցի այն եւ երբեք քո առաջ չեմ կեղծել այն օրից, երբ քո բարեկամն եմ», եւ ես նրան պատմեցի ամեն բան՝ ինչ եղել է: Բայց երբ ես ուզում էի տալ այն մարդու անունը, որի մոտ պահվում էր ե-

րեսուն հազար դիրհարը, նա ասաց. «Պետք չէ, չասեւ: Չարմանք է. այն անհավատը խադիս գիտե մարգարեի մասին. թող ալլահն օրինե նրան ու ողորկեն»:

Շարունակելի
Ռուսերենից թարգմանեց
Արշակ ՄԱՌՈՅԱՆԸ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Ասողիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517 197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր.
17.6.2013 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ